

**Նունե Զոմարդյան**

*ԵՄՀ միջազգային կապերի և հեղափոխությունների կենտրոնի պարասիսա-նսարու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ*

## **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Սույն հոդվածում ներկայացված են Հայաստանի Հանրապետության՝ որպես սոցիալական պետության ձևավորման և զարգացման չորս փուլերը: Սահմանադրական զարգացումների, սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծման, ինչպես նաև ազատ շուկայական տնտեսության պայմաններում բնակչության սոցիալական պաշտպանության իրականացման գնահատման հիման վրա հեղինակը Հայաստանը բնութագրում է որպես ֆորմալ բնույթի սոցիալական պետություն:

**Հիմնաբառեր.** սահմանադրություն, սոցիալական պետություն, սոցիալական պաշտպանություն, սոցիալական քաղաքականություն, շուկայական տնտեսություն:

### **Ներածություն**

Ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների մեծամասնության առանցքում իրավացիորեն դրված է այն ընկալումը, որ հայ ժողովրդի թե՛ պատնությունը, թե՛ իրավաքաղաքական ու հասարակագիտական մտքի զարգացումն ընթացել է մարդու իրավունքների և ազգային-ազատագրական պայքարի իրականացման և տեսական հիմնավորման լույսի ներքո, որտեղ կարևոր ու հիմնարար նշանակություն է ունեցել այն գաղափարը, որ հայերի միասնության, միաբանության, միասնական ուժը կայանում է ներքին համախմբվածության մեջ, և դրան հասնելու միակ

գրավականն է օրենքի ուժով հասարակական հարաբերությունների այնպիսի կարգավորումը, որը կնպաստի սոցիալական խաղաղության, սոցիալական համերաշխության և երկրի սոցիալ-տնտեսական բարգավաճմանը (Մարդու իրավունքների հիմնահարցերը..., 1999): Մեր օրերում այս դատողությունների իրավացիությունն արտահայտվում է այն փաստով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ներածությունում գլխավոր նպատակների շարքին են դասվում սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավատարմությունը համամարդկային արժեքներին, իսկ 1-ին հոդվածում՝ սահմանադրական կարգի կարևոր հիմնադրույթներից է հռչակվում սոցիալական պետությունը (հոդվ.1):

Հայկական պետականության կայացման արդի հիմնախնդրի ընկալումն այս լույսի ներքո առաջացնում է կենսական անհրաժեշտություն՝ տեսականորեն մշակելու, գիտականորեն հիմնավորելու և օրենսդրորեն ամրագրելու սոցիալական պետության հայեցակարգի և սկզբունքի հիմնադրույթներն ու իրականացման մեխանիզմները: Այդ իսկ պատճառով հույժ կարևոր է, նախևառաջ վերլուծել Երրորդ Հանրապետության՝ որպես սոցիալական պետության ձևավորման գործընթացը:

### **Տեսական հիմքերը**

Ուսումնասիրությունն իրականացվել է պատմականության, օբյեկտիվության, գնահատման բազմակարծության սկզբունքների հիման վրա: Օգտագործվել են նաև նորմատիվ նյութի դասակարգման, համեմատական-իրավական, համակարգային վերլուծությունների մեթոդները:

Սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների վերլուծության ընթացքում գնահատվել է ժողովրդավարության ինստիտուտների և շուկայական հարաբերությունների ազդեցությունը վերջինիս վրա: Այդ գործընթացներն ուսումնասիրվել են այնքանով, որքանով որ նպաստել են սոցիալական պետության իրավական գնահատմանը:

### **Հայկական պետականության ձևավորման վրա ազդեցություն գործած օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները**

Մինչ բուն գործընթացների ուսումնասիրությունը, կարևոր ենք համարում ընդգծել մի քանի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք խոր ազդեցություն են ունեցել հայկական սոցիալական պետականության ձևավորման վրա:

**Նախ՝** Հայաստանի երրորդ Հանրապետությունն իր անկախության կերտման շեմին կանգնեց արդեն իսկ առկա սոցիալ-տնտեսական խնդիրների առջև, որոնք պայմանավորված էին հետևյալով՝

- 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով կազմալուծվել էր Հայաստանի տարածքի 1/3-ի կյանքը,
- 1990-ականների սկզբից Հայաստանը հայտնվել էր տևական շրջա-

- փակման մեջ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից,
- Ադրբեջանում տեղի ունեցած ողբերգական դեպքերի հետևանքով առաջ էր եկել փախստականների զանգվածային հոսք դեպի Հայաստան,
- ԽՍՀՄ-ի փլուզման և շրջափակման հետևանքով խզվել էին միջ-հանրապետական տնտեսական ավանդական կապերը, դադարել էր հումքի մատակարարումը: Սկսվել էր էներգետիկ ձգնաժամը,
- Փակվել էին Հանրապետության խոշոր ձեռնարկությունները:

**Երկրորդ** կարևոր գործոն էր պետության դերի թերի, որոշ դեպքերում նաև բացասական ընկալումը: Այն ուներ իր ուրույն պատճառները: Հայ ժողովուրդը պետականության կորստի պայմաններում մոտ 700 տարի գտնվել էր օտարերկրյա լծի տակ և մշտապես ձգտել էր ազատվել այդ իշխանություններից, իսկ իր ազգային ինքնության պահպանման, գոյատևման ու այլ ժողովուրդների հետ միաձուլման չենթարկվելու համար առաջնորդվել էր ոչ թե կոնկրետ երկրում գործող օրենքներով, այլ հայկական գաղութներում ստեղծված իրավական նորմերով՝ հարաբերությունները կարգավորելու և ազգային առանձնահատկությունները պահպանելու նպատակով: Այս ամենին գումարվել էր նաև այն, որ հետագայում՝ Խորհրդային Միության գաղափարախոսության պայմաններում, պետությունը դիտարկվել էր որպես ընչազուրկներին շահագործող մեքենա, իսկ սոցիալիստական պետությունը՝ կիսապետություն, որը ժամանակի ընթացքում պետք է վերացվեր: Բացի այդ, արևմտյան որոշ փորձագետների կարծիքով կոմունիզմի գերիշխանության դարաշրջանում պետության հետ կապված ամեն ինչ ուներ վատ համբավ, քանի որ «պետության» հայեցակարգը սովորաբար կապված էր կոմունիստական կուսակցության գերիշխանության հետ (Рандма-Лийв, 2008, էջ 76): Վ.Դրեխալերի (1995) կարծիքով նախկին սոցիալիստական պետություններում առավել լուրջ խնդիրների հիմքում ընկած էր այն, որ բացակայում էր պետության հասկացության վերաբերյալ քաղաքացիների կողմից ընդունելի համընդհանուր ճանաչում ունեցող ըմբռումը, ինչը հանգեցնում էր քաղաքացիների կողմից պետության հանդեպ ավտոմատ հավատարմության բացակայությանը, պետական իշխանության մարմինների հետ համագործակցության և իրավական ու վարչական որոշումների հանդեպ իրական հարգանքի բացակայությանը (էջ 112): Նման հակապետական տրամադրությունները հանգեցրեցին նվազագույն լիազորություններ ունեցող պետության հայեցակարգի տարածմանը:

**Երրորդ**՝ ի սկզբանե բացակայում էր նոր ազատականության մոդելի անցման հայեցակարգային ընկալումն ու պլանավորումը: Շուկայի ազատականացումը պահանջում էր շուկայական կառույցների ստեղծում, ազատ անհատի իրավական կարգավիճակի ամրագրում, կշռադատված, երկարաժամկետ հեռանկարային պետական քաղաքականություն և համապատասխան օրենսդրության ձևավորում, այսինքն՝ անհրաժեշտ էր ազատականության և սոցիալական պաշտպանության տարրերի որոշակի համաձայնեցում: Վերջինիս կարևորությունն ապացուցված էր երկրների պատմությամբ:

յամբ, առ այն որ ազատական մոդելները, առանց սոցիալական բովանդակության, ժամանակի ընթացքում հանգեցրել էին սոցիալական առձակատումների և հեղափոխական շարժումների ողջ Եվրոպայում՝ Իսպանիայից մինչև Ռուսաստան (Rodríguez González, 2014, էջ 127):

Այստեղ կարևոր է նաև ընդգծել, որ «կենսագործվող սոցիալ-տնտեսական վերափոխումները հաճախ մեխանիկական ընդօրինակումն էին այս կամ այն երկրում կատարվող ընդհանուր գործընթացների՝ առանց հաշվի առնելու տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները» (Մինասյան, 2003, էջ 230): Նմանատիպ դիրքորոշում էր հայտնել նաև Ռիչարդ Ռոուզը (1993)՝ ընդգծելով, որ հետևյալի ստանդարտական երկրները, որպես կանոն, ձգտում էին կրկնօրինակել առավել զարգացած եվրոպական երկրներին (էջ 111)՝ տիրապետելով այդ ուղու զարգացման վերաբերյալ նվազ գիտելիքների (էջ 23): Այդ մտտեցումն իր մեջ պարունակում էր բազմաթիվ վտանգներ: Քաղաքական փիլիսոփայության գերմանացի պրոֆեսոր Գ. Ռոռնոզերի (1993) խոսքերով, եթե նախկին Խորհրդային Միության քաղաքացիները բարեկեցիկ կյանք կառուցելու իրենց հույսերը, այն է՝ բարեկեցությունը, ազատությունը և իրավական երաշխիքները կապում են միայն ազատական փիլիսոփայության հետ, ապա դա շատ վտանգավոր է և կարող է հանգեցնել աջակողմյան դիկտատուրայի կամ ավտորիտարիզմի, վատագույն դեպքում՝ նաև տոտալիտարիզմի: Վերջինիս գնահատմամբ Արևմուտքը չէր կարող դիտարկվել որպես ազատական գաղափարների ու սկզբունքների լավագույն օրինակ, քանի որ տվյալ ժամանակահատվածում (XX-րդ դարի վերջում) գործող արևմտյան ժողովրդավարությունը նույնպես ձգնաժամի մեջ էր, չնայած, որ այն տարբեր ձևերով էր արտահայտվում տարբեր երկրներում և պայմանավորված էր տարբեր գործոններով (էջ 17-18):

Եթե հետևենք Գ.Ռոռնոզերի տրված գնահատականին, ապա ստացվում է, որ քանդված տնտեսության վրա դրվեց ձգնաժամի մեջ գտնվող քաղաքական վարչաձև, որը ոչ մի ձևով չէր կարող օգնել ստանձնած բարեփոխումներին:

**Չորրորդ** կարևոր հանգամանքը վերաբերում էր պետական գույքի, հատկապես արդյունաբերության զանգվածային սեփականաշնորհմանը: Գործնականում այն վերածվել էր պետության սեփականության վերաբաշխման՝ մարդկանց փոքր խմբի օգտին, որի հետևանքով «հանրապետության ընտանիքների ընդամենը 8%-ը տիրացավ մասնավորեցված գույքի ավելի քան 90%-ին» (Մինասյան, 2003, էջ 116): Պետական գույքի սեփականաշնորհման գործընթացի արդյունքը հանգեցրեց տնտեսության «օլիգարխիզացման» (Rodríguez González, 2014, էջ 131): Էական տարբերություն առաջացավ սահմանադրական ձևակերպումների և փաստացի տնտեսական կառուցվածքի միջև:

**Հինգերորդ** հանգամանքը, որն առաջ եկավ ժամանակի ընթացքում և օրակարգային էր ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածի համար, կապված էր պետության վարչաձևի հիմնախնդրի (ժողովրդավարության

ինստիտուտների թույլ զարգացվածության) հետ: Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կառույցների տարբեր տարիների գեկույցները փաստում էին, որ երկրում մեծ թիվ էին կազմում ընտրակեղծիքները, առկա էր անվստահություն դատական իշխանությունների նկատմամբ, բարձր էր կոռուպցիայի մակարդակը: Տարբեր ընկերությունների ղեկավարներ ու օլիգարխներ տեղեր էին զբաղեցնում Ազգային ժողովում և պետական այլ մարմիններում՝ օգտագործելով իրենց գրասենյակները սեփական բիզնեսի շահերը խթանելու համար: Մի շարք դիտորդների կարծիքով, կառավարության հետ կապված կամ պետական պաշտոններ զբաղեցնող օլիգարխները մենաշնորհել էին տնտեսությունը (օրինակ՝ Armenia 2000, Human Development Report): Այս պայմաններում Հանրապետությունում ստեղծված պետաիրավական վարչաձևը բնութագրվում էր որպես «ցածր ինտեսիվության ժողովրդավարություն»: Ժողովրդավարություն, որի պայմաններում չէր խրախուսվում բնակչության համախմբումը, իսկ իշխանությունները շարունակում են մնալ լայնորեն վարկաբեկված (Barry Gils և համահեղինակներ, 1993):

Բայցևայնպես, չնայած այս ամենին, հայ ժողովուրդը լի էր ազատ, անկախ Հայաստան կառուցելու վճռականությանը ու երազանքով, ինչն էլ մղեց համակարգային բարեփոխումների՝ հանուն Հայաստանի լավագույն ապագայի:

### **Սոցիալական քաղաքականության իրականացումը որպես ընդհանուր տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ մաս**

Անկախության հռչակումը և շուկայական հարաբերությունների ձևավորման սկիզբը հանդիսացան նոր պետականության կերտման և սոցիալական խնդիրների լուծման **առաջին փուլը** (1990–1995 թթ.): Այն նշանավորվեց 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունմամբ, որում ամրագրված հիմնական դրույթներից էին ժողովրդավարական, իրավական պետություն ստեղծելու անհրաժեշտությունը, մարդու իրավունքների հարցում խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատության հռչակումը, երկրի տնտեսական հիմքում մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունների ճանաչումը: Այս դրույթներն իրենց հետագա իրավական ճանաչումն ստացան անկախության հռչակումից մի քանի օր անց՝ 1991թ. սեպտեմբերի 25-ին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում: Նշված փաստաթղթերն իրենց մեջ արտահայտում էին ինչպես ազգային ինքնատիպության առաջնահերթությունները, այնպես էլ ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներն ու սահմանադրաիրավական ժամանակակից զարգացման միտումները:

Այնուամենայնիվ, այս փուլում Հայաստանի սահմանադրաիրավական զարգացումները դեռևս չանդրադարձան արևմտյան սահմանադրակա-

նությունում իր ճանաչում ստացած սոցիալական պետության հիմնադրություններին: Դա հիմնականում թելադրված էր ձգտումով՝ կառուցել ազատականացված շուկա և վերջ դնել նախկին վարչափրամայական համակարգում պետական մակարդակի հասցված տնտեսական մենաշնորհին: Ժողովրդավարությունը, շուկայական հարաբերությունների զարգացումը և մարդու արժանապատիվ կյանքի հիմնախնդիրը չէին դիտարկվում որպես փոխկապված և միմյանցով պայմանավորված մեկ ամբողջականություն: Արդյունքում, սոցիալական բաղադրիչը դուրս մնաց ընդհանուր իրավական կարգավորումից:

Մ.Յարմալոյանի բնութագրմամբ՝ տվյալ ժամանակահատվածում սոցիալական բնույթի դժվարությունները բացատրվում էին սոցիալական պաշտպանության իրականացման մեխանիզմների և ավանդույթների բացակայությամբ (Յարմալոյան, 2015, էջ 18): Ընդունելով նշված խնդիրները, կարծում ենք, որ դրանց հիմնական պատճառը, նոր ձևավորվող ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում, սոցիալական պետության գործառույթների վերաբերյալ հայեցակարգային մոտեցման, ազատականության և սոցիալական պաշտպանության տարրերի համաձայնեցվածության, ինչպես նաև սոցիալական պաշտպանության հարցում կառուցվածքային իրական բարեփոխումների անհրաժեշտության գիտակցման բացակայությունն էր: Ինչ վերաբերում է օրենսդրությանը, ապա սոցիալական խնդիրներին վերաբերող նորմատիվ ակտերը կան հատվածային էին, կան հնացած<sup>1</sup>, կան, որոշ դեպքերում նաև հանդիսանում էին «նախկին ԽՍՀՄ օրենքի խմբագրված և տեղայնացված տարբերակը»<sup>2</sup>: Բացասական ազդեցություն էր թողնում նաև տնտեսության բարեփոխումը «շուկային թերապիայի» ուղով, քանի որ բացի խորքային, կառուցվածքային վերափոխումներից, այն միաժամանակ նաև պահանջում էր զբաղվածության ակտիվ քաղաքականություն (Հովսեփյան, 2014, էջ 101): Մինչդեռ աշխատաշուկայի և զբաղվածության ոլորտում պետական կարգավորման միջոցառումները պասիվ էին (Հակոբյան, 2000, էջ 85):

Վերը նշված քաղաքականության իրականացման պայմաններում 1992 թվականի դրությամբ հանրապետությունում պաշտոնապես գրանցվեց աղքատության 94 տոկոս: Երկրի բնակչությունը հայտնվեց անելանելի կացության մեջ: Պարզ դարձավ, որ ազատական մոդելն առանց սոցիալական բովանդակության հղի է բազում վտանգներով: Նորանկախ պետությունը՝ որպես սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարման ուղի ընտրեց մարդասիրական օգնության տրամադրումը: Այդ նպատակով 1993թ-ին ձևավորվեց ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովը, և նույն տարում ՀՀ Նախագահի հրամանագրով հիմնվեցին սոցիալական ծառայությունները, ստեղծվեց «Փարոս» համակարգը: Դրանից շատ չանցած ստեղծվեցին զբաղվածության տարածքային գործակալությունները, որոնց նպատակը գործազուրկ և աշխա-

1 Օրինակ՝ Աշխատանքային օրենսգիրքը:

2 Օրինակ՝ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 1992թ. փետրվարի 25-ին (Տե՛ս Հակոբյան, 2000, էջ 95):

տանք որոնող մարդկանց սոցիալական աջակցությունն էր:

Ըստ էության այս մարմինների իրավական ամրագրումն արդեն իսկ նշանակում էր պետության կողմից բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման նոր գործառույթի ստանձնում, որի արդյունքում խորհրդային պետական-պատերնալիստական սոցիալական ապահովության սկզբունքները փոխարինվում էին եվրոպական երկրներին բնորոշ սոցիալական պաշտպանության համակարգով: Այն ուղղված էր «...սոցիալական ռիսկերի կանխարգելմանը, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացման, վերացման միջոցով բնակչության սոցիալական անվտանգության ապահովմանը» (Յարմալոյան, 2016, էջ 26): Ստեղծվող համակարգը առաջ էր բերում պետության կողմից ռիսկերի կառավարման անհրաժեշտություն, որն էլ կազմելու էր երկրի սոցիալական քաղաքականության էությունը: Սակայն գործնականում այս համակարգն ուներ իմաստավորման անհրաժեշտություն և դեռ նոր պետք է ձևավորվեր:

### **Սոցիալական պետության սկզբունքի սահմանադրական ամրագրումը և սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորումը**

Անկախության ձեռք բերման 5-րդ տարում ընդունվեց Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրությունը, որի 1-ին հոդվածն ամրագրեց Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, իսկ 4-րդ հոդվածը սահմանադրական կարգի այլ սկզբունքների հետ մեկտեղ սահմանեց, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Սահմանադրության 2 գլուխը համապատասխանաբար նվիրվեց մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներին և ազատություններին՝ սահմանադրական ձանաչում տալով ինչպես հիմնարար քաղաքացիական ու քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքներին:

Սոցիալական պետության՝ որպես հիմնարար սահմանադրական սկզբունքի ամրագրմամբ սկիզբ դրվեց հայկական պետության սոցիալականացման **երկրորդ փուլին**, որն ընդգրկեց 1995–2005 թվականները:

Սահմանադրական այս սկզբունքի իրացման նպատակով սկսեցին իրականացվել որոշակի քայլեր:

Օրենսդրության տեսակետից՝ ընդունվեցին բնագավառի խնդիրներին վերաբերող մի շարք նորմատիվ-իրավական ակտեր, որոնց հիմնական մասն առնչվում էր սոցիալական ապահովության հետ<sup>1</sup>:

1 Ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին» (29.05.1996 թ.), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» (06.12.1995թ.), «Բնակչության զբաղվածության մասին» (03.12.1996 թ.) ՀՀ օրենքները: Փոփոխվեցին «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» և «Բռնադատվածների մասին» (9 հունիսի 1997 թ.) ՀՀ օրենքներում: Ընդունվեցին մի շարք Կառավարության որոշումներ, այդ թվում՝ «Առանձին խմբերի երեխաներին, միայնակ մայրերին և մինչև 2 տարեկան երեխա խնամող անձանց

Սոցիալական գործառույթի գործնական իրացման առումով պետությունը շարունակեց կենսաթոշակների տրամադրումը և սոցիալական աջակցության տարբեր ծրագրերը: Միննույն ժամանակ մարդասիրական օգնությունը, բնակչությանը տրամադրվող պետական օգնության համակարգը՝ դրամական նպաստների և փոխհատուցումների ծրագիրը, տարատեսակ արտոնությունները փոխարինվեցին սոցիալական պաշտպանության նոր կառուցակարգով: 1999 թվականի հունվարի 1-ից ներդրվեց ընտանեկան նպաստի համակարգը, որը գործող 26 տարաբնույթ նպաստների և փոխհատուցումների համակարգից անցում կատարեց դեպի մեկ միասնական նպաստի համակարգի և առավել անապահով ընտանիքների նկատմամբ հասցեագրված սոցիալական աջակցության քաղաքականության իրականացմանը (ՀՀ Կառավարության թիվ 727 որոշում, 19.11.1998թ.): Տեղի ունեցավ անցում առանձին խմբերին տրամադրվող սոցիալական աջակցությունից դեպի հասցեագրված սոցիալական քաղաքականություն՝:

Նշված դրույթների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց սոցիալական պաշտպանության համակարգ, որն իր մեջ ներառեց հետևյալ ծրագրերը՝

- **պետական սոցիալական օժանդակության ծրագրեր**, ինչպիսիք են՝ ընտանեկան նպաստները, հաշմանդամության, տարիքային և այլ սոցիալական կենսաթոշակները, երեխայի ծնվելու հետ կապված միանգամյա նպաստները, երեխային խնամելու նպաստները (մինչև երեխայի երկու տարին լրանալը)․
- **սոցիալական ապահովության ծրագրեր** հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես՝ բժշկասոցիալական վերականգնման ծրագրեր, տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում սպասարկելու սոցիալական ծրագրեր, տուն-ինտերնատների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների պահպանումը․
- **պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր**, որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստներից․
- **զբաղվածության ծրագրեր**՝ ներառյալ գործազրկության նպաստներ, գործազուրկների վերապատրաստման, ինչպես նաև հասարա-

տրվող պետական նպաստների նշանակման և վճարման կարգի մասին» 1997 թվականի հունիսի 13-ի N 172, «Գործազրկության բազային նպաստի չափը սահմանելու մասին» 1997 թ. մարտի 10-ի N 30, «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 9-ի N 562 որոշումները և այլն:

1 1992թ.-ից մինչև 1998թ.-ը պետական տրանսֆերտ տրամադրելու համար միակ և բավարար հիմք էր հանդիսանում անձի՝ որոշակի սոցիալական խմբի պատկանելու համապատասխանությունը (անչափահաս երեխա, հաշմանդամ, կենսաթոշակառու և այլն): Սակայն նպաստը կամ փոխհատուցումը նշանակելիս հաշվի չէին առնվում անձի բարեկեցության մակարդակը: Եվ երբեմն նույն անձին նշանակվում էր մեկից ավելի տրանսֆերտ, եթե անձը բավարարում էր մեկից ավելի սոցիալական խմբերի (օր. միայնակ մոր մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա): Նման մոտեցումը բերում էր առանց այդ էլ ծանր վիճակում գտնվող պետական բյուջեի միջոցների քիչ արդյունավետ և շատ հաճախ անարդարացի տրամադրմանը:



կական աշխատանքների և նմանատիպ ծրագրեր.

- **բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ**, որը 1999 թ. Ենթարկվել էր էական կրճատման և բաղկացած էր մի քանի արտոնություններից՝ հիմնականում Հայրենական պատերազմի վետերանների (և նրանց հավասարեցված անձանց) համար, որոնք պայմանավորված են ԱՊՀ շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով և մեծամասամբ ֆինանսավորվում էին ծառայություններ մատուցողների կողմից (ՀՀ Կառավարության թիվ N 994-Ն որոշում, 8.08.2003թ, կետ 244, էջ 64):

Առաջ եկան նաև սոցիալական առանձին խնդիրներին վերաբերող իրավական վերլուծություններ: Դրանց թվում էր Հրանուշ Հակոբյանի «Սոցիալական պետության կառուցման ճանապարհին» հետազոտությունը, որտեղ անդրադարձ էր արվել սոցիալական ապահովության կառավարման մարմինների ձևավորման կարգին ու գործունեության սկզբունքներին, մատնանշվել էին ոլորտում առկա մի շարք խնդիրներ (Հակոբյան, 2000): Սոցիալական պետության էությունն ու հիմնական նշանակությունը բացահայտվել և մեկնաբանվել էին 2000թ. լույս տեսած «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» բուհական դասագրքում (Այվազյան Ն., Այվազյան Վ., Դանիելյան Գ., Եղյան Ռ. և ուրիշ., 2000):

Բայցևայնպես, չնայած ձեռնարկված քայլերին, երկրի սոցիալական քաղաքականությունը հիմնականում պասիվ էր և անարդյունավետ, իսկ ստեղծված սոցիալական լարվածությունը շարունակում էր մնալ բավականին բարձր: Անկայուն էր նաև հանրապետությունում տիրող քաղաքական վիճակը: 1995-1996 թթ. խորհրդարանական ու նախագահական ընտրությունների ընթացքում թույլ տրված ընտրակեղծիքներն ու ներքաղաքական լարվածությունը բացասական ազդեցություն ունեցան ժողովրդավարական ինստիտուտների կայացման վրա, գնալով ավելացավ կոռուպցիան, սխալներ ու չարաշահումներ գրանցվեցին պետական գույքի սեփականաշնորհման գործընթացներում, խորացավ աղքատությունը: 1996-1999 թթ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն երկրում տիրում էր «լճացած աղքատություն» (Արմենակյան, 2015, էջ 55): Հայաստանը 90-ական թվականներին վերապրում էր տնտեսական ու սոցիալական խորը անկում, որի ամենավերիչ դրսևորումներից էին բնակչության զանգվածային աղքատացումը, եկամուտների անհավասարությունը և հասարակության՝ տագնապալի չափերի հասնող բևեռացումը (Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, 8.08.2003թ, էջ 6-7):

Ստեղծված աղետային վիճակը Կառավարությունից պահանջեց ձեռնարկել համապատասխան միջոցներ, որի արդյունքում 2003թ. օգոստոսի 8-ին հաստատվեց Հայաստանի Հանրապետության առաջին երկարաժամկետ սոցիալ-տնտեսական փաստաթուղթը՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ): Ծրագրի 5-րդ կետի համաձայն ԱՀՌԾ-ում նպատակ էր դրված «կրճատել աղքատությունը, որպեսզի այն դադար

րի երկրի տնտեսական, սոցիալական ու մարդկային առաջադիմությունը արգելակող և հասարակությունը կազմալուծող գործոն լինելուց» (ՀՀ Կառավարության թիվ N 994-Ն որոշում, 8.08.2003թ, էջ 7):

Ցավոք, այս փաստաթուղթը չդարձավ աղքատության հաղթահարման այն հիմնական լոկոմոտիվը, որն ի վիճակի կլիներ ձգնաժամից դուրս բերել հայկական հասարակությունը: Բնակչության սոցիալական պաշտպանության տեսակետից ծրագրի 246-րդ կետը նշում էր, որ «հաշվի առնելով աղքատության կրճատման հարցում տնտեսական աճի կարևորությունը, սոցիալական պաշտպանության քաղաքականությունը՝ (i) չպետք է խաթարի տնտեսական աճի բարձր տեմպերը և կայունությունը, այլ կերպ ասած՝ սոցիալական պաշտպանության քաղաքականության նպատակները և դրանց հասնելու համար հատկացվող պետական ռեսուրսների ծավալը պետք է որոշվեն՝ ելնելով երկրում տնտեսական և ներդրումային ակտիվության բարձր մակարդակ ապահովելու գերակայություններից...» (ՀՀ Կառավարության թիվ N 994-Ն որոշում, 8.08.2003թ, կետ 246, էջ 64): Այսինքն՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջին երկարաժամկետ ռազմավարական ծրագիրը սոցիալական պաշտպանության քաղաքականությունն ուղղակիորեն ստորադասվեց տնտեսական աճի կարևորությանը:

Բնակչության սոցիալական խնդիրների բարելավման տեսանկյունից ոչ մի էական ազդեցություն չունեցան նաև զբաղվածության և կենսաթոշակային ապահովության մասին 1996 թ. դեկտեմբերի 3-ին ընդունված օրենքները: Հ.Հակոբյանի բնութագրմամբ աշխատաշուկայի վերլուծությունը ցույց տվեց, որ «զբաղվածության հիմնահարցերը ոչ միայն չեն լուծվել, այլև ավելի են սրվել... Խիստ բարձր են աշխատավարձից կատարվող պահումները, որը մեծապես խանգարում է նոր աշխատատեղերի ստեղծմանը և խթանում սովետային գործազրկությանը... ցածր է նաև սահմանված նվազագույն աշխատավարձը» (Հակոբյան, 2000, էջ 91-92): Կենսաթոշակներն ու նպաստները ոչ միայն շատ ցածր էին, այլև կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը վճարումները կազմակերպում էր ձգձգումներով, կատարվում էին օրենսդրության խախտումներ, շատ հաճախ էլ նշանակվում էին կեղծ թոշակներ, ցուցակներում պահվում մահացած մարդիկ: 1992թ. և 1996թ. օրենքների հիմքում նախատեսված էին տարբեր սկզբունքներ, որի արդյունքում առաջացել էր սոցիալական անարդարություն. նույն մասնագետները աշխատած միևնույն տարիների համար ստանում էին տարբեր չափի թոշակ, կախված նրանից, թե որ օրենքի համապատասխան էին թոշակավորվել (Հակոբյան, 2000, էջ 107):

Հաշվի առնելով այս հանգամանքները, փորձ արվեց փոփոխություններ մտցնել կենսաթոշակների ապահովագրության մեջ: 2002թ. նոյեմբերի 19-ին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքը իրավական ամրագրում տվեց կամավոր կենսաթոշակային ապահովագրությանը, որը գործատուների ու քաղաքացիների կամավոր վճարների և դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին օրենքով սահմանված կարգով երաշխավորելու էր ապահովագրված անձանց լրացուցիչ սոցիալա-

կան ապահովության իրականացումը: Սակայն, այս սկզբունքի գործադրումը տվյալ փուլում անհնարին էր, քանի որ գործող կենսաթոշակային համակարգը չէր համապատասխանում ձևավորվող ազատ շուկայական հարաբերություններին: Այն «հիմնված էր սերունդների համերաշխության (բաշխողական) սկզբունքի վրա և ֆինանսավորվում էր ընթացիկ մուծումների հաշվին» (Հովհաննիսյան, 2007, էջ 15):

Այսպիսով, Հանրապետությունում առաջացավ պետության սոցիալական գործառույթների հստակեցման և սոցիալական քաղաքականության մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն: Այս հարցում կարևոր դեր խաղաց նաև Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին: 2001 թվականի հունվարի 25-ին դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ՝ Հայաստանը պարտավորվեց ընդունել իրավունքի գերակայության սկզբունքը և այդ նպատակով ստորագրեց ու վավերացրեց մի շարք կարևորագույն փաստաթղթեր, այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան ու Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան<sup>1</sup>:

### Սոցիալական բարեփոխումների իրականացում

Սահմանադրական տեսության և պրակտիկայի զարգացման արդյունքում պարզ դարձավ, որ 1995թ. ՀՀ Սահմանադրության մեջ բացակայում էր մեթոդաբանական նշանակություն ունեցող հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն և անօտարելի արժեք, որպես անմիջական գործող իրավունք ձանաչելու և երաշխավորելու նկատմամբ: Անհրաժեշտ էր «հրաժարվել խորհրդային ձևախեղված լեգիստապոզիտիվիստական իրավամտաճողությունից և ... ՀՀ Սահմանադրության մեջ ... (ամրագրել) հստակ վերաբերմունք մարդու արժանապատվության, նրա իրավունքների՝ որպես բարձրագույն արժեք ձանաչելու նկատմամբ (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010, էջ 64)»: Այս հարցում առավել արժևորվեցին Սահմանադրության 3-րդ և 14-րդ հոդվածները, 3-րդ հոդվածի առաջին մասը հոչակեց. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածը մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքն ամրագրեց նրա արժանապատվությունը՝ պարտավորեցնելով պետությանը հարգել և պաշտպանել մարդու արժանապատվությունը, որի մեջ էր մտնում նաև մարդու արժանապատիվ կյանքի և ազատ զարգացման պայմանների ապահովումը:

Սահմանադրության վերակողմնորոշումը դեպի մարդը, նրա բազմատեսակ սոցիալական պահանջմունքներով և հետաքրքրություններով հանդերձ, առաջ քաշեց սոցիալական ոլորտի վերափոխման նոր անհրաժեշտ

1 Մինչ այդ Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ միացել էր 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» (23 հունիսի 1993թ.) և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» (13 սեպտեմբերի 1993թ.) միջազգային դաշնագրերին:

տություն, որն էլ հատկանշական էր զարգացման **երրորդ փուլին**<sup>1</sup>՝ ընդգրկելով 2005-2015թթ.:

Այս փուլում սոցիալական պետության համար կարևոր նշանակություն ունեցան պետության սոցիալական գործառույթների բարելավմանն ուղղված քայլերը:

2005թ հոկտեմբերի 24-ին «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքների ընդունմամբ հստակեցվեցին Կառավարության «Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի իրավական հիմքերը և հասցեականությունը: Պետական նպաստներն ուղղվեցին աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելուն, քաղաքացու որոշակի ծախսեր հատուցելուն: Այնուհետև, ըստ 2013թ.-ի դեկտեմբերի 12-ին ընդունված նոր օրենքի, պետությունը՝ որպես գործառույթային նպատակ ամրագրեց նաև անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը:

Սոցիալական պաշտպանության քաղաքականության ամբողջության մեջ փոփոխություններ կատարվեցին նաև ընտանիքների անապահովության գնահատման կարգում այն առումով, որ դրանք համահունչ լինեն առաջնային եկամուտների՝ աշխատավարձի, կենսաթոշակի տարեցտարի բարձրացմանը, ինչպես նաև ՀՀ-ում բնակչության աղքատության ցուցանիշների և ժողովրդագրական փոփոխություններին (Ամփոփ հաշվետվություն, 2017, էջ 9):

Պետության սոցիալական պաշտպանության գործառույթի իրականացման առումով որակական փոփոխություն էր ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը: Այն նախատեսում էր սոցիալական պաշտպանության ոլորտում զուտ վերաբաշխման գործառույթից անցում կատարել դեպի ակտիվ, նախաձեռնողական քաղաքականության իրականացմանը: Պետությունը պարտավորվեց հետևանքները վերացնելուն միտված պասիվ ծրագրերի (դրամական վճարներ, արտոնություններ) հաշվին ընդլայնել սոցիալական անբավարարվածություն (սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն) ծնող պատճառները վերացնելուն և կանխարգելելուն միտված ծրագրերը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման սուբյեկտ ճանաչվեցին նաև համայնքներն ու ոչ-պետական կազմակերպությունները՝ դառնալով սոցիալական գործընկերներ:

2005-2006թթ. Հայաստանում սկսվեց նաև կենսաթոշակային բարեփոխումների նոր փուլ, որը սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված համակարգից անցում կատարեց որակապես նոր՝ կուտակային կենսաթոշակային համակարգի, որին համապատասխան 2010թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումն ապահովող օրենքների փաթեթը<sup>1</sup>:

<sup>1</sup> Այդ փաթեթը ներառում էր «Կուտակային կենսաթոշակների մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Եկամտային հարկի մասին», «Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքները: Հետագայում Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է «Պետական կենսաթոշակների մասին» առանձին

2005թվականը բնութագրվում է նաև որպես զբաղվածության պետական կարգավորման համակարգի հստակեցման շրջան, որին սկիզբ դրեց «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքը (24.10.2005թ.) :

Հետագա տարիներին ևս կատարվեցին որոշակի փոփոխություններ ապահովագրության, երիտասարդների սոցիալական աջակցության, պետական մարմիններում և կրթության, մշակույթի, գիտության ու սոցիալական պաշտպանության ոլորտների պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատողների և նրանց անմիջական ընտանիքների անդամների աջակցման, կրթական և այլ ոլորտներում:

2008թ. տեղի ունեցավ նաև «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» (ԱՀՌԾ) վերանայումը: Սակայն ընդունում ենք այն տեսակետը, որ այդ վերանայումն անհիմն էր: Հարցն այն է, որ ԱՀՌԾ-ի նախատեսված ցուցանիշները դեռ ապահովված չէին, վերանայման փաստաթղթերը հիմնավորված չէին, իսկ նոր ընդունված ծրագրում բոլոր նպատակադրումներն ու գերակայությունները<sup>1</sup> նախորդի կրկնությունն էին (Հովհաննիսյան Հ., Հովհաննիսյան Մ., 2015, էջ 10): Բոլոր դեպքերում 2009 թվականից Կայուն զարգացման ծրագրի իրագործումը փաստացիորեն սառեցվեց ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ծանր ու բացասական ազդեցության հետևանքով:

Ասվածը հիմնավորվում է նաև Հանրապետություն ստեղծված վիճակով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2014թ-ին 2008 թ. համեմատությամբ մեծացել էր աղքատների տեսակարար կշիռը: Տնտեսության դրական աճի տեմպերը ոչ միայն չէին նպաստել աղքատության կրճատմանը, այլև խորացրել էին աղքատ և հարուստ խավերի եկամուտների տարբերությունը: Զարգացումները նպաստել էին միայն բնակչության ավելի ապահովված խավերի եկամուտների ավելացմանը (Հովհաննիսյան Հ., Հովհաննիսյան Մ., 2015, էջ 13): Պահպանվում էր էական խզումը աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև: Իրական գործազրկության մակարդակը զգալիորեն ավելի բարձր է, քան զբաղվածության պետական ծառայությունների կողմից գրանցված գործազրկության մակարդակը: Այն 2009թ. կազմել էր 18.7%՝ պաշտոնապես գրանցված գործազրկության 7.0%-ի համեմատ (Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում, 2011, էջ 6): Ցածր էր նաև աշխատողների մեծ մասի աշխատավարձը, այն չէր ապահովում անգամ վերջիններիս նվազագույն կենսաապահովման մակարդակը:

դրույթների սահմանադրականության հարցին, սակայն այդ խնդիրները սույն հոդվածում չեն քննարկվում:

1 ԿԶԾ-ն նշեց, որ իր ռազմավարությունը նույնպես բաղկացած կլինի երեք հիմնական գերակա ուղղություններից, որոնք ամրագրված էին ԱՀՌԾ-ում: Այդ ուղղություններն էին՝ ա) կայուն արագ տեմպերով տնտեսական աճի ապահովումը, բ) ակտիվ և բնակչության խոցելի խմբերին (ներառյալ՝ աղքատներ և ծայրահեղ աղքատներ) ուղղված նպատակային սոցիալական ու եկամտային քաղաքականության իրականացումը, գ) երկրի կառավարման համակարգի արդիականացումը՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի ընդլայնման ապահովումը: (Կայուն զարգացման ծրագիր, 2008, էջ 34):

2009 թվականի դրությամբ բյուջեի սոցիալական պաշտպանության ծախսերի հսկայական մասնաբաժինը (86–87%-ը) հատկացվել էր սոցիալական և ապահովագրական (աշխատանքային), կենսաթոշակային և աղքատության ընտանեկան նպաստների ֆինանսավորմանը (Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում, 2011, էջ 11): Այսինքն, շատ քիչ միջոցներ էին ուղղվել սոցիալական պաշտպանության մյուս ծրագրերին:

Մարդու իրավունքների ապահովման տեսանկյունից ամենակարևոր խնդիրներն էին համակարգային կոռուպցիան և իշխանության թափանցիկության բացակայությունը, դատական համակարգի սահմանափակ անկախությունը և քաղաքացիների կողմից կառավարությունը փոխելու սահմանափակ հնարավորությունները (Armenia 2014, էջ 1):

Այսինքն՝ երկրի սոցիալ-տնտեսական երկարաժամկետ ծրագրերում առաջադրված նպատակները չէին իրականացվել, իսկ հայտարարված գերակայությունները հակասության մեջ էին եղել իրականացված քաղաքականության հետ: (Հովհաննիսյան Հ., Հովհաննիսյան Մ., 2015, էջ 10):

Սոցիալ-տնտեսական զարգացման հաջորդ խոշոր փաստաթուղթը՝ 2014–2025 թթ. «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» էր, որը ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվեց 2014թ. մարտի 27-ին: Երկարաժամկետ զարգացման ռազմավարության գերխնդիրն էր բնակչության բարեկեցության շարունակական աճը, իսկ գերակա ուղղություններն էին 1) զբաղվածության ընդլայնումը, 2) մարդկային կապիտալի զարգացումը, 3) սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը, 4) կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումը: Կարելի է ասել, որ այս փաստաթուղթը «ինչ-որ չափով վերադարձ էր ԱՀՌԾ-ին» (Հովհաննիսյան Հ., Հովհաննիսյան Մ., 2015, էջ 10), ինչն իր հերթին փաստում է, որ 2014թ. Հայաստանը կանգնել էր նույն այն խնդիրների առջև ինչ դարեակզբին:

Երկրի հետագա զարգացումը պահանջում էր նոր արդիական մոտեցումների և զարգացման նմուշօրինակների առաջադրում: Առաջ եկան սոցիալական պետության հիմնախնդիրներին վերաբերող մի շարք նոր գիտական ուսումնասիրություններ<sup>1</sup>: Ձևավորվեց սոցիալական պետության նոր հայեցակարգ, ըստ որի «Ամենաընդհանուր իմաստով սոցիալական պետության սկզբունքն ուղղված է սոցիալական արդարությանը, այն պարտադրում է պետությանն ապահովել արդար սոցիալական կարգ: Սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն ընդհանուր ծրագրային դրույթ է կամ սահմանադրաիրավական ուղենիշ, այլ նաև պարտադիր սահմանադր-

1 Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա. Սահմանադրական բարեփոխումների դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործական հետազոտություն): Երևան, 2015: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Երևան, 2010, էջ 39–55: Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ խմբ. Ն.Ա. Այվազյան, Երևան, 2012, էջ 131–135: Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, էջ 82–90, 184–19: Ա.Ա.Մանուկյան Սոցիալական պետության էությունը և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան արդի դարաշրջանում: Ատենախոսություն...իրավաբ. գիտ. թեկ. ... հայցման, Երևան, 2015:

րական նորմ: Այն առաջին հերթին ուղղված է օրենսդրին և պարտավորեցնում է վերջինիս զարգացնել և իրագործել սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն սոցիալական իրավունքի ավելի նեղ բնագավառում, այլ նաև իրավունքի բոլոր ոլորտներում» (Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, 2015, էջ 137-138):

Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքների վերանայման ու կատարելագործման անհրաժեշտությունը դարձավ սահմանադրական բարեփոխումների կարևոր ու անհրաժեշտ ուղղություններից մեկը:

### **Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքների սահմանումը**

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների երրորդ ալիքի հիմնական խնդիրներից էր սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի հետևողական իրացման և հստակ ծրագրանպատակային քաղաքականություն իրականացնելու համար առավել հստակ սահմանադրական երաշխիքների ստեղծումը (Հայեցակարգ, էջ 8): Այդ փոփոխությունների արդյունքում մեր երկրի սահմանադրական զարգացման տեսությունն ու պրակտիկան թևակոխեցին մի նոր փուլ պետականաշինության և սահմանադրականության առաջընթացի գործում: 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված սահմանադրության նոր խմբագրությունը նշանավորեց սոցիալական պետության զարգացման **չորրորդ փուլը** (2015թ.- ներկա):

Փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 11-րդ հոդվածը հստակեցրեց սոցիալական պետության տնտեսական կարգը՝ սոցիալական շուկայական տնտեսությունը, սահմանեց տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները<sup>1</sup>:

Չնայած այս բարեփոխումներին, երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը և պետական համակարգի թերությունները 2018թ. գարնանը հանգեցրեցին ժողովրդի ընդվզմանն ու թավշյա հեղափոխությանը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցավ իշխանափոխություն:

### **Եզրակացություն**

Վերջին դարաշրջանի պետությունների պատմությունը փաստում է, որ ազատական մոդելները, առանց սոցիալական բովանդակության, հանգեցրել են սոցիալական հակամարտությունների և հեղափոխական շարժումների: Այդ ձևարտությունը հաստատվեց նաև Հայաստանի Հանրապետության անցած մոտ 30 տարվա պատմությամբ: Այն ցույց տվեց, որ պե-

<sup>1</sup> Չորրորդ փուլի առանձնահատկությունները մեր կողմից կմեկնաբանվեն առանձին և ընդլայնված հոդվածում:

տության կայունության ու համերաշխության հիմնական գրավականը ժողովրդի բարօրությունն է և որ սոցիալական պետությունը մնում է ժամանակակից կառավարության հիմնարար չափանիշը և ժողովրդավարական պետության կարևոր տարրը:

Վերը շարադրածը փաստում է, որ անկախության տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ճանաչել ու սահմանադրական ամրագրում է տվել սոցիալական պետության սկզբունքին: Անցնելով զարգացման 4 հիմնական փուլերով՝ ձևավորել ու կատարելագործել է սոցիալական պաշտպանության համակարգը, սոցիալական ծառայությունների տրամադրումը, սոցիալական ապահովության ծրագրերը: Սակայն ստեղծելով սոցիալական պետության անհրաժեշտ հատկանիշները (ատրիբուտները), պետությունը չի ապահովել դրանց բավարար կիրառումը: Այս առումով Հայաստանի Հանրապետությունը կարող ենք բնութագրել որպես **ձևական (ֆորմալ) սոցիալական պետություն:**

Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով կարևոր ենք համարում սոցիալական պետության սահմանադրական հայեցակարգը դիտարկել նաև ժողովրդավարություն – տնտեսության զարգացում – սոցիալական պաշտպանվածություն համատեքստում: Այդ փոխկապվածությունը պետք է դիտարկել ինչպես սահմանադրական սկզբունքներում, այնպես էլ հաշվի առնել այս կամ այն հարցի սահմանադրականության հարցի լուծման ընթացքում: Իրականացվող փոփոխությունների համատեքստում կարևոր է նաև սոցիալական շուկայական տնտեսության և սոցիալական խնդիրների միասնական սկզբունքների մշակումը: Սահմանադրական ձևակերպումների և փաստացի տնտեսական կառուցվածքի միջև հակասությունների վերացման համար ձեռնարկել տնտեսական գործունեության ընդլայնման և սեփականության պաշտպանության մեխանիզմների կատարելագործման միջոցներ, ինչն էլ իր հերթին կնպաստի սոցիալական շուկայական տնտեսությանը բնորոշ՝ իր գործողությունների համար ինքնուրույն և պատասխանատու անհատի ձևավորմանն ու սոցիալական լարվածության նվազեցմանը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված 1995թ. հուլիսի 5-ին):
2. ՀՀ Սահմանադրություն (ընդունված 1995թ. հուլիսի 5-ին՝ 2005թ. Նոյեմբերի 27-ի փոփոխություններով):
3. ՀՀ Սահմանադրություն (ընդունված 1995թ. հուլիսի 5-ին՝ 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով):
4. Հռչակագիր «Հայաստանի անկախության մասին» (ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին):
5. «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը (ընդունվել է 1991թ. սեպտեմբերի 25-ին):
6. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին):



7. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2013թ.-ի դեկտեմբերի 12-ին):
8. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2005թ հոկտեմբերի 24-ին):
9. «Զբաղվածության և կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին):
10. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2002թ. նոյեմբերի 19-ին):
11. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի համակարգը ներդնելու մասին» 1998 թվականի նոյեմբերի 19-ի N 727 որոշում, ՀՀՊՏ 1998.11.30/30(63):
12. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշում, ՀՀՊՏ 2003.09.17/47(282) Հոդ.854:
13. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» 30 հոկտեմբերի 2008 թվականի N 1207-Ն որոշում, ՀՀՊՏ 2008.11.05/66(656) Հոդ.1146:
14. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետության 2014–2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1207-ն որոշումն ուժը կորցրած ծանաչելու մասին» 27 մարտի 2014 թվականի N 442-Ն որոշում, ՀՀՊՏ 2014.05.07/23(1036).1 Հոդ.358.1:
15. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» 26 հուլիսի 2012 թվականի N 952-Ն որոշում, ՀՀՊՏ 2012.08.15/39(913) Հոդ.937:
16. Ամփոփ հաշվետվություն «Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի մշտադիտարկման և գնահատման: «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ: Հայաստանի Հանրապետություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2017:
17. Արմենակյան Ռուզաննա (2015): ՀՀ տնտեսության կերպափոխման փուլերը// Զարգացման ժամանակակից մարտահրավերներ: Գիտաժողովի նյութեր, 1 / ՀՊՏՀ: – Եր.: Տոնեսագետ:
18. Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը հետխորհրդային Հայաստանում. ձևավորման ընթացքը և զարգացման հեռանկարները: (2015) Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները: Գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու: 1, էջ 15–24:
19. Հակոբյան Հրանուշ (2000): Սոցիալական պետության կառուցման ճանապարհին: Երևան:
20. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ (2014): Մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին

- առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից: Երևան:
21. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (2010) / ընդհանուր խմբագրությանը՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. – Եր.: «Իրավունք»:
  22. Հովհաննիսյան Գ.Շ. (2007): Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի գենդերային հիմնախնդիրները.–Եր.: «Բավիղ»:
  23. Հովհաննիսյան Հայկազ, Հովհաննիսյան Մարիաննա (2015): Տնտեսական աճի դերը ՀՀ զարգացման գերակայություններում «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», № 4, էջ 9–17:
  24. Հովսեփյան Վ. (2014) Ազգային տնտեսություն: Ուսումնական ձեռնարկ/ Վ. Հովսեփյան, Մ. Եղիազարյան.– Եր.: ԵՊՀ:
  25. Մարդու իրավունքների հիմնահարցերը հայ իրավական–հասարակական մտքի պատմության էջերում (1999): (ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոն), Եր.:
  26. Մինասյան Էդիկ (2003): Սոցիալ–տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990–2003 թթ.), Եր., Երևանի համալս. հրատ.:
  27. Յարմալոյան Մ. (2016): «Սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը. Կատեգորիալ վերլուծություն // «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», թիվ 2, էջ 21–27:
  28. Սոցիալական ապահովության քաղաքականության ծրագիր (1997) /Խմբ.՝ Հ. Հակոբյան, Գ. Եզանյան, Գ. Գսպոյան; ՀՀ Սոց. ապահով. նախ. Երևան:
  29. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն) (2015)/ Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան.– Եր.: Հայրապետ հրատ.:
  30. «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում»: Զեկույց (2011): Եվրոպական Հանձնաժողով, Զբաղվածության, սոցիալական ոլորտի և ներառվածության Գլխավոր տնօրինություն: Կատարող՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ–Հայաստան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ:
  31. Пормозер Г. (1993). Пути либерализма в России . – Полис. Политические исследования. № 1., էջեր 17–24:
  32. Тийна Рандма–Лийв (2008). О применимости «Западных» теорий государственного управления в посткоммунистических странах.//Вопросы государственного и муниципального управления. № 2, էջեր 73–87:
  33. Armenia 2000, Human Development Report. Human Rights and Human Development Action for Progress.
  34. Armenia 2014 Human Rights Report. Country Reports on Human Rights Practices for 2014.
  35. United States Department of State • Bureau of Democracy, Human Rights and Labor.
  36. Drechsler W. (1995). Estonia in Transition // World Affairs, 157(3), Winter, էջեր 111–118.
  37. Francisco Jorge Rodríguez González (2014). Exploring the Constitutional Possibilities for a European Social Model. Some Common Constitutional Traditions between

- Liberalism and Social Intervention. // Centre international de formation européenne | «L'Europe en Formation » 2014/2 n° 372» |, էջեր 122- 151.
38. Low Intensity Democracy: Political Power in the New World Order, (1993), edited by Barry Gills, Joel Rocamora and Richard Wilson. London; Boulder, CO: Pluto Press with the Transnational Institute.
39. Rose R. (1993). Lesson-Drawing in Public Policy: A Guide to Learning across Time and Space. New Jersey: Chatham House.

**Нуне Джомардян**

*Руководитель Центра международных связей и исследований  
Международного университета Евразия,  
заместитель заведующего юридической кафедры*

## **СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ИДЕИ СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА И ИНСТИТУТОВ СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ В СОВРЕМЕННОЙ АРМЕНИИ**

В данной статье представлены четыре этапа развития Республики Армения как социального государства. На основе оценки конституционных изменений, создания системы социальной защиты, а также оценки социальной защиты населения в условиях свободной рыночной экономики автор характеризует Армению как формальное социальное государство.

**Ключевые слова:** конституция, социальное государство, социальная защита, социальная политика, рыночная экономика.

**Nune Jomardyan**

*Head of International Relations and Research Center,  
Deputy Head of Law Department at Eurasia International University*

## **THE EMERGENCE AND DEVELOPMENT OF THE NOTION OF SOCIAL STATE AND SOCIAL PROTECTION INSTITUTES IN CONTEMPORARY ARMENIA**

This article presents four phases of social state formation and development in the Republic of Armenia. Based on the assessment of the constitutional developments, the establishment of a social protection system, as well as the assessment of the social protection of the population under the free market economy, the article describes Armenia as a formal social state.

**Key words:** constitution, social state, social protection, social policy, free market economy.

Հոդվածը ներկայացվել է գրախոսման՝ 2019թ. մարտի 22-ին  
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2019թ. ապրիլի 19-ին